

ՀԱՍՏԱՏՎԱԾ

Բաղկացած է 7 (յոթ) թերթից

ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ԵՎ ԳՈՐԾԱՐԱՐՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ

Տպագրված է ընդամենը 4 օրինակ  
Օրինակ 4

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

հիմնադիրների ժողովի որոշմամբ  
«02» ապրիլի 2009թ.

ԳՐԱՆՅՎԱԾ Է  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ  
ՌԵԳԻՍՏՐԻ  
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ

Նախագահ՝


Ա. Եսոյան

«21» 04 2009թ.

գրանցման թիվ 211 171 05042

վկայական 030 085140

«Տնտեսական ռեգիստրի ղեկավար՝



Ա. Գևորգյան

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

«ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ԵՎ ԳՈՐԾԱՐԱՐՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ»

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1 Հարկ վճարողների և գործարարների իրավունքների պաշտպանության հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) ոչ առևտրային կազմակերպություն է, որում իրենց շահերի ընդհանրության հիման վրա օրենքով սահմանված կարգով միավորվել են ֆիզիկական անձինք՝ իրենց ոչ կրոնական հոգևոր և ոչ նյութական այլ պահանջումքները բավարարելու, իրենց և այլոց իրավունքներն ու շահերը պաշտպանելու, հասարակության առանձին խմբերին նյութական և ոչ նյութական աջակցություն ապահովելու, հանրօգուտ այլ գործունեություն իրականացնելու նպատակներով:
- 1.2 Կազմակերպությունը գործում է ՀՀ օրենսդրության, ՀՀ միջազգային պայմանագրերի և սույն կանոնադրության հիման վրա:
- 1.3 Կազմակերպության գործունեության սկզբունքներն են օրինականությունը, կամավորությունը, իրավահավասարությունը, ինքնակառավարումը և հրապարակայնությունը:
- 1.4 Կազմակերպությունը գործում է ՀՀ ողջ տարածքում և օտարերկրյա պետություններում՝ այդ պետությունների օրենսդրությանը համապատասխան:
- 1.5 Կազմակերպության հայերեն լրիվ անվանումն է՝ Հարկ վճարողների և գործարարների իրավունքների պաշտպանության հասարակական կազմակերպություն:
- 1.6 Կազմակերպության ռուսերեն լրիվ անվանումն է՝ Общественная Организация защиты прав налогоплательщиков и предпринимателей.
- 1.7 Կազմակերպության անգլերեն անվանումն է՝ Non-Governmental Organization of Tax-Payers and Businessmen Rights Protection:
- 1.8 Կազմակերպության գտնվելու վայրն է՝ ՀՀ ք. Երևան, Ավան, Սայաթ-Նովա թաղ. 4-րդ շենք, բն. 26:

## 2. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

- 2.1 Կազմակերպության գործունեության առարկան ու նպատակներն են՝ օրենքով սահմանված կարգով՝
  - ՀՀ հարկ վճարողների և գործարարների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության օժանդակություն.
  - ՀՀ հարկ վճարողների և գործարարների իրավագիտակցության բարձրացման և ՀՀ-ում հարկային կուլտուրայի ձևավորման օժանդակություն.
  - Պետական իշխանության մարմինների կողմից պետական բյուջեի ձևավորման և դրա ծախսային մասերի նկատմամբ հասարակական վերահսկողության կազմակերպում և օժանդակություն.
  - Հասարակական օժանդակություն պետության կողմից հարկա-բյուջետային, ֆինանսատնտեսական քաղաքականության կազմակերպման ժամանակ և օժանդակություն այդ քաղաքականության հասարակական վերահսկողության միասնական համակարգ ստեղծելու համար.
  - Հասարակության ներգրավումը իրավական և հումանիտար բարեփոխումների նախագծերին և ծրագրերին.
  - Հարկ վճարողների և հարկային մարմնի միջև առաջացած վեճերի լուծման օժանդակություն.
  - Հարկ վճարողների, գործարարների և պետական մարմինների միջև առաջացած վեճերի լուծման օժանդակություն և աջակցություն նրանց իրավունքների պաշտպանության ոլորտում:
- 2.2 Կանոնադրական նպատակներին հասնելու համար կազմակերպությունը ՀՀ օրենսդրության համապատասխան լուծում է հետևյալ խնդիրները՝
  - Հասարակական և պետական մարմինների նախաձեռնությունների աջակցություն, որոնք ուղղված են ՀՀ հարկ վճարողների և գործարարների իրավագիտակցության բարձրացմանն ու ՀՀ-ում հարկային կուլտուրայի ձևավորմանը, պետական իշխանության մարմինների կողմից պետական բյուջեի ձևավորման և դրա ծախսային մասերի նկատմամբ հասարակական վերահսկողության կազմակերպմանը, այդ թվում նշված աշխատանքներին հարկ վճարողների համընդհանուր ներգրավման միջոցով.

- ՀՀ-ում ֆինանսատնտեսական գործունեություն իրականացնող անձանց նկատմամբ վերահսկողություն և ստուգում իրականացնող մարմինների գործունեության հրապարակայնության և մատչելիության բարձրացում.
- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով աջակցության կազմակերպում հասարակության կողմից պետական և համայնքային բյուջեի միջոցների ծախսերի մասին տեղեկություն ստանալու ուղղությամբ.
- Պետական կառավարման ֆունկցիոնալ աուդիտի կազմակերպման օժանդակության ցուցաբերում.
- Հարկային և ձեռնարկատիրական գործունեության հետ կապված հարաբերությունները կարգավորող օրենսդրության կատարելագործման աջակցություն, նպատակ ունենալով այն դարձնել պարզ և կայուն՝ կատարելագործելով տվյալ օրենսդրության կիրառման պրակտիկան.
- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ֆիզիկական և իրավաբանական անձանց ցանկացած իրավունքի պաշտպանության օժանդակություն.
- համագործակցություն հայաստանյան և արտասահմանյան մնամատիպ հասարակական կազմակերպությունների և դրանց միությունների, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների հետ.
- խորհրդակցությունների, սեմինարների, կլոր սեղանների, գիտաժողովների կազմակերպում և անցկացում, բրոշուրների, ամսագրերի, գրքերի հրատարակում.
- սույն կանոնադրությունից բխող և ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ գործունեության իրականացում:

### 3. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՍԱԳՐՎԵԼՈՒ ԵՎ ԱՆԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԻՑ ԴՈՒՐՍ ԳԱԼՈՒ ԿԱՐԳԸ

- 3.1 Օրենքով սահմանված կարգով Կազմակերպության անդամ կարող է դառնալ Հայաստանի Հանրապետության, ինչպես նաև օտարերկրյա 18 տարին լրացած ցանկացած քաղաքացի, որը ցանկանում է մասնակցել նրա գործունեությանը և ընդունում է Կազմակերպության կանոնադրությունը:
- 3.2 Կազմակերպության անդամ դառնալու ցանկություն ունեցող անձը գրավոր դիմում է Կազմակերպության խորհրդին (այսուհետ՝ Խորհուրդ):
- 3.3 Կազմակերպության անդամության մեջ ընդունելու հարցը լուծում է խորհուրդը:
- 3.4 Կազմակերպությանն անդամագրված անձն ազատ է դուրս գալու Կազմակերպությունից: Կազմակերպության անդամությունից զրկումը տեղի է ունենում խորհրդի որոշմամբ:
- 3.5 Կազմակերպության այն անդամը, որը Կազմակերպության նախագահի կողմից կողմից սահմանված լինելու դեպքում վեց ամիս անընդմեջ չի վճարում անդամավճար, խորհրդի որոշմամբ զրկվում է անդամությունից: Վերստին նրա անդամագրումը կատարվում է ընդհանուր հիմունքներով:

### 4. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՍՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- 4.1 Կազմակերպության անդամն իրավունք ունի՝
  - ընտրել և ընտրվել Կազմակերպության բարձրագույն և այլ մարմիններում, ընդ որում, ղեկավար մարմիններում կարող է ընտրվել 18 տարին լրացած անձը.
  - Կազմակերպության աշխատանքները բարելավելու նպատակով նրա ղեկավար մարմիններին ներկայացնել դիմումներ, առաջարկություններ և բողոքներ.
  - սպառիչ տեղեկատվություն ստանալ Կազմակերպության գործունեության մասին.
  - ազատ դուրս գալ Կազմակերպությունից.
  - Կազմակերպությունից ստանալ իրավական օգնություն՝ ուղղված իր օրինական շահերի պաշտպանությանը.
  - մասնակցել Կազմակերպության կողմից կազմակերպված միջոցառումներին.
  - Կազմակերպության նախագահի, խորհրդի և այլ մարմինների ոչ կանոնադրական գործունեության դեմ գրավոր բողոքարկել Ժողովին կամ դատարան՝ օրենքով սահմանված

կարգով: Կազմակերպության մարմնի (այդ թվում բարձրագույն մարմնի) որոշումը, որն ընդունվել է օրենքի, Կազմակերպության կանոնադրության կամ վերադաս մարմինների որոշումներով սահմանված կարգի խախտմամբ կամ ոտնահարել է Կազմակերպության կամ Կազմակերպության անդամի իրավունքներն ու օրինական շահերը, կարող է դատական կարգով անվավեր ճանաչվել Կազմակերպության անդամի դիմումի հիման վրա: Նման դիմում կարող է տրվել 60 օրվա ընթացքում՝ սկսած այն օրվանից, երբ Կազմակերպության անդամն իմացել է կամ պարտավոր էր իմանալ այդպիսի որոշման ընդունման մասին, եթե օրենքով այլ բան սահմանված չէ:

4.2 Կազմակերպության անդամը պարտավոր է՝

- հոգ տանել Կազմակերպության հեղինակության մասին.
- կատարել Կազմակերպության կանոնադրության պահանջները, ղեկավար մարմինների որոշումները.
- մոծել մուտքի վճար և ամսական անդամավճար, որոնց չափն ու վճարման կարգը սահմանում է Կազմակերպության նախագահը.
- բարեխղճորեն կատարել իր վրա դրված պարտականությունները:

4.3 Կազմակերպության կանոնադրությունը խախտող կամ իր պարտականությունները չկատարող անդամի նկատմամբ Կազմակերպության ընդհանուր ժողովի կամ խորհրդի կողմից կարող են կիրառվել կարգապահական տույժի միջոցներ՝ նկատողություն, Կազմակերպության անդամությունից զրկում:

## 5. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

5.1 Կազմակերպությունը հանդիսանում է իրավաբանական անձ՝ պետական գրանցման պահից:

5.2 Կազմակերպությունն ունի առանձնացված գույք, ինքնուրույն հաշվեկշիռ, կնիք՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն լեզուներով, դրոշմ, հաշվարկային հաշիվ քանկում՝ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա արժույթով, իր անունից կարող է ձեռք բերել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ և կրել պարտականություններ, որպես հայցվոր և պատասխանող հանդես գալ դատարանում: Կարող է ունենալ խորհրդանիշ:

5.3 Կազմակերպությունն ինքնուրույն է որոշում իր կազմակերպական կառուցվածքը, խնդիրները, նպատակները և գործունեության ձևերը:

5.4 Կազմակերպությունն իր կանոնադրությամբ նախատեսված նպատակները և խնդիրներն իրականացնելու համար, օրենքով սահմանված կարգով իրավունք ունի՝

- տեղեկատվություն տարածել իր գործունեության մասին.
- հիմնադրել լրատվության միջոցներ.
- կազմակերպել և անցկացնել խաղաղ, առանց զենքի ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր.
- ներկայացնել ու պաշտպանել իր և իր անդամների իրավունքներն ու օրինական շահերն այլ կազմակերպություններում, դատարանում, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում.
- համագործակցել ոչ առևտրային այլ կազմակերպությունների, այդ թվում՝ միջազգային և օտարերկրյա ոչ կառավարական ոչ առևտրային կազմակերպությունների հետ, ինչպես նաև համակարգված գործունեություն ծավալելու, ընդհանուր շահեր ներկայացնելու և պաշտպանելու նպատակով այլ կազմակերպությունների հետ ստեղծել միություններ կամ անդամակցել նրանց ստեղծած միություններին՝ պահպանելով իր ինքնուրույնությունը և իրավաբանական անձի կարգավիճակը.
- իր կանոնադրությամբ սահմանված կարգով ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ՝ մասնաճյուղեր և ներկայացուցչություններ, ինչպես նաև հիմնարկներ.
- ստեղծել առևտրային կազմակերպություններ կամ մասնակից դառնալ այդպիսի կազմակերպությունների.
- կնքել օրենսդրությամբ չարգելված պայմանագրեր և այլ գործարքներ.

- ինքնուրույն կազմավորել և տնօրինել իր ֆինանսական ռեսուրսները՝ այդ թվում փոխառու միջոցների ներգրավմամբ, Հայաստանի Հանրապետությունում և այլ պետություններում ստանալ վարկեր, դրամաշնորհներ:
- իրականացնել ինքնուրույն արտաքին գործունեություն, այդ թվում՝ կնքել համաձայնագրեր օտարերկրյա ոչ առևտրային և ոչ կառավարական կազմակերպությունների հետ, անդամակցել միջազգային հասարակական կազմակերպություններին, իր անդամներին և այլ անձանց գործուղել արտասահմանյան երկրներ, հրավիրել այլ երկրներից քաղաքացիներ, ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ օտարերկրյա պետություններում՝ այդ պետությունների օրենսդրությանը համապատասխան:
- օրենքով կարող են նախատեսվել կազմակերպության նաև այլ իրավունքներ:

## 6. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### 6.1 Կազմակերպությունը պարտավոր է՝

- ցանկացած ֆիզիկական անձի պահանջով յոթ օրացուցային օրվա ընթացքում նրան հնարավորություն տալ ծանոթանալու կազմակերպության կանոնադրությանը:
- օրենքով սահմանված կարգով վարել գործավարություն և հաշվապահական հաշվառում:
- իր գործունեության և գույքի օգտագործման հաշվետվությունները ներկայացնել կազմակերպության ընդհանուր ժողովի հաստատմանը ոչ պակաս, քան երկու տարին մեկ անգամ՝ ապահովելով այդ հաշվետվությունների հրապարակայնորեն մատչելի լինելը:
- պետական կառավարման լիազորված մարմնի պահանջով նրան տրամադրել իր բարձրագույն և այլ մարմինների որոշումների պատճենները, Կազմակերպության գործունեության մասին այլ փաստաթղթեր:
- թույլատրել այդ մարմինների ներկայացուցիչներին ներկա գտնվել Կազմակերպության ընդհանուր ժողովին:
- օրենքով նախատեսված դեպքերում և կարգով տեղեկատվություն ու հաշվետվություններ ներկայացնել պետական մարմիններին:
- առանձնացված ստորաբաժանում կամ հիմնարկ ստեղծելու և կազմալուծելու մասին որոշումներ ընդունելուց հետո՝ մեկ ամսյա ժամկետում դիմել պետական գրանցման մարմին, սահմանված կարգով դրանք հաշվառելու և հաշվառումից հանելու համար:
- վարել իր անդամների հաշվառումը:
- ՀՀ արդարադատության բնագավառի պետական կառավարման լիազորված մարմնի (այսուհետ՝ պետական լիազորված մարմին) պատճառաբանված պահանջով ողջամիտ ժամկետում նրան տրամադրել կազմակերպության գործունեության մասին այլ փաստաթղթեր, թույլատրել այդ մարմնի ներկայացուցիչներին՝ ներկա գտնվելու կազմակերպության ժողովին:
- առանց լիազորագրի կազմակերպությունը ներկայացնելու իրավունք ունեցող պաշտոնատար անձի և (կամ) կազմակերպության գտնվելու վայրի հասցեի փոփոխման դեպքում, 14 օրացուցային օրվա ընթացքում պետական գրանցման մարմին ուղարկել այդ անձի անձնագրային տվյալները և (կամ) Կազմակերպության գտնվելու վայրի նոր հասցեի մասին տվյալները:
- օրենքով կարող են նախատեսվել կազմակերպության նաև այլ պարտականություններ:

## 7. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

- 7.1 Կազմակերպության գործունեության և կառավարման ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունքը պատկանում է Կազմակերպության բարձրագույն մարմնին՝ ընդհանուր ժողովին:
- 7.2 Ընդհանուր ժողովը հրավիրվում է յուրաքանչյուր երկու տարին մեկ անգամ: Ընդհանուր ժողովը հրավիրում, դրա անցկացման կարգն ու ժամկետները որոշում է խորհուրդը: Եթե Կազմակերպության անդամների թվաքանակը անցնում է հարյուրի սահմանը, ապա խորհրդի կողմից սահմանված կարգով ընդհանուր ժողովին կարող են մասնակցել անդամների կողմից ընտրված ներկայացուցչական պատվիրակները:

Կազմակերպության արտահերթ ընդհանուր ժողով հրավիրվում է Կազմակերպության անդամների մեկ երրորդի պատճառաբանված պահանջով՝ խորհրդի կողմից՝ պահանջող կողմի հաստատած օրակարգով՝ ոչ ուշ, քան 14 օրացուցային օրվա ընթացքում:

7.3 Ընդհանուր ժողովի բացառիկ իրավասության հարցերն են՝

- Կազմակերպության կանոնադրության հաստատումը և փոփոխումը.
- Կազմակերպության ղեկավար մարմինների ընտրությունը.
- Կազմակերպության ընդհանուր և ֆինանսատնտեսական գործունեության վերահսկողությունը.
- Կազմակերպության լուծարման և վերակազմակերպման մասին որոշումների ընդունումը.
- Կազմակերպության գործունեության և գույքի օգտագործման հաշվետվությունների հաստատումը:

7.4 Ընդհանուր ժողովը կարող է հարցեր քննարկել և որոշումներ ընդունել, եթե նրան մասնակցում են Կազմակերպության անդամների կեսից ավելին: Հարցերի քննարկման ժամանակ որոշումներն ընդունվում են բոլոր անդամների կամ պատվիրակների ձայների պարզ մեծամասնությամբ:

7.5 Խորհուրդն ընտրվում է ընդհանուր ժողովի կողմից երկու տարի ժամկետով: Խորհուրդն իր աշխատանքներն իրականացնում է նիստերի ձևով, որոնք հրավիրվում են Կազմակերպության նախագահի կողմից ոչ ուշ, քան վեց ամիսը մեկ անգամ: Խորհրդի նիստ կարող է հրավիրվել նաև Կազմակերպության անդամների 20%-ի, խորհրդի երկու անդամների պահանջով:

7.6 Խորհուրդը՝

- հաստատում է Կազմակերպության նախագահի հաշվետվությունները, այդ թվում՝ ընդհանուր ժողովին ներկայացվող հաշվետվությունը.
- առաջարկություններ է ներկայացնում ընդհանուր ժողովին՝ նրա բացառիկ իրավասությանը վերաբերող հարցերի վերաբերյալ.
- ընդունում է Կազմակերպության անդամ և ազատում կամ զրկում անդամությունից.
- Կազմակերպության անդամների նկատմամբ կիրառում է խրախուսանքներ և տույժի միջոցներ.
- ղեկավարում է Կազմակերպության գործունեությունը՝ ընդհանուր ժողովների միջև ընկած ժամանակաշրջանում.
- ձեռք է բերում, տիրապետում, օգտագործում, տնօրինում, օտարում և դուրս գրում Կազմակերպության՝ մեկ միլիոն դրամը գերազանցող արժողությամբ գույքը.
- ստեղծում և լուծարում է Կազմակերպության հիմնարկները, առանձնացված ստորաբաժանումները (մասնաճյուղեր, ներկայացուցչություններ), ինչպես նաև հաստատում է նրանց կանոնադրությունները.
- հաստատում է Կազմակերպության աշխատակազմի հաստիքացուցակը, աշխատողների վարձատրության կարգն ու չափերը.
- սահմանում է Կազմակերպության ղեկավար մարմիններում ընդգրկված անձանց վարձատրության կարգը և չափը.
- հաստատում է Կազմակերպության հաշվապահական հաշվառման հաշվետվությունները.
- իրավունք ունի քննարկել և լուծել Կազմակերպության գործունեությանն ու կառավարմանն առնչվող ցանկացած հարց, բացառությամբ ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանը վերապահվածներից:

7.7 Խորհուրդը կարող է հարցեր քննարկել և որոշումներ կայացնել, եթե նրան մասնակցում են իր անդամների կեսից ավելին: Խորհրդի որոշումներն ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ: Չայների հավասարության դեպքում նախագահի ձայնը վճռորոշ է:

7.8 Կազմակերպության նախագահն ընտրվում է ընդհանուր ժողովի կողմից երկու տարի ժամանակով:

7.9 Կազմակերպության նախագահը, ի պաշտոնե խորհրդի նախագահն է՝

- ղեկավարում է խորհրդի աշխատանքները և վարում է նրա նիստերը.
- ներկայացնում է Կազմակերպությունն առանց լիազորագրի.
- իրականացնում է Կազմակերպության ողջ գործադիր ղեկավարումը.
- արձակում է հրամաններ, տալիս է լիազորագրեր.
- սահմանում է Կազմակերպության անդամների կողմից մուտքի վճարի և անդամավճարի մուծման կարգը, չափերը և ձևերը.

- օրենքով սահմանված կարգով կնքում է գործարքներ, ստորագրում է պայմանագրեր, ֆինանսական փաստաթղթեր, բացում բանկային հաշիվներ.
- հաստատում է Կազմակերպության աշխատակազմի հաստիքացուցակը, աշխատողների վարձատրության կարգն ու չափերը.
- ձեռք է բերում, տիրապետում, օգտագործում, տնօրինում, օտարում և դուրս գրում Կազմակերպության՝ մինչև մեկ միլիոն դրամ արժողությամբ գույքը՝ ցանկացած չափի և քանակի:

## **8. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ԳՈՅԱՑՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ**

- 8.1 Կազմակերպության գույքը հանդիսանում է Կազմակերպության սեփականությունը:
- 8.2 Կազմակերպությունը որպես սեփականություն կարող է ունենալ անշարժ գույք, տրանսպորտային միջոցներ, սարքավորումներ, դրամական միջոցներ, արժեթղթեր և օրենքով չարգելված այլ գույք: Կազմակերպության անդամը նրա սեփականության նկատմամբ բաժնային իրավունք չունի:
- 8.3 Կազմակերպության սեփականության գոյացման աղբյուրներ կարող են լինել՝
- Կազմակերպության անդամների մուտքի վճարները, անդամավճարները, դրամական և նյութական ներդրումները.
  - բանկերից և վարկային կազմակերպություններից ստացված վարկերը.
  - դրամաշնորհները.
  - բարեգործական ներդրումները, քաղաքացիների և կազմակերպությունների նվիրատվությունները.
  - Կազմակերպության կողմից հիմնադրված տնտեսական ընկերությունների կողմից փոխանցված գումարները.
  - Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ մուտքերը.
- 8.4 Կազմակերպության սեփականությունը գտնվում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության ներքո:
- 8.5 Կազմակերպության սեփականությունը կարող է բռնագանձվել միայն դատարանի կողմից՝ օրենքով սահմանված կարգով:
- 8.6 Կազմակերպության միջոցները կարող են օգտագործվել միայն կազմակերպչական ծախսերի և կանոնադրությամբ սահմանված նպատակների և խնդիրների իրականացման համար:
- 8.7 Կազմակերպության ղեկավար մարմիններում ընտրված անձինք Կազմակերպության կողմից կարող են վարձատրվել: Նշված անձանց վարձատրության չափը սահմանում է խորհուրդը:

## **9 ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ԼՈՒՑԱՐՈՒՄԸ, ԼՈՒՑԱՐՄԱՆ ԴԵՊԸՈՒՄ ԳՈՒՅՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ**

- 9.1 Կազմակերպությունը կարող է լուծարվել ընդհանուր ժողովի կամ դատարանի որոշմամբ: Ընդհանուր ժողովը կազմավորում է լուծարման հանձնաժողով և օրենքով նախատեսված կարգով սահմանում լուծարման կարգն ու ժամկետները: Կազմակերպության լուծարման ավարտին լուծարման հանձնաժողովը, պարտադիր վճարումներն իրականացնելուց հետո մնացած գույքը, ժողովի որոշմամբ սահմանված կարգով, օգտագործում է Կազմակերպության կանոնադրական նպատակների և խնդիրների իրականացման համար, իսկ եթե դա հնարավոր չէ՝ փոխանցում է պետական բյուջե:
- 9.2 Կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել ընդհանուր ժողովի որոշմամբ կամ օրենքով սահմանված դեպքերում դատարանի որոշմամբ՝ օրենքով սահմանված կարգով:

Կազմված է 02.04.2009թ.